

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-1-7-Ա

ք. Երևան

08.02.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի փետրվարի 8-ի նիստում քննարկեց 2023 թվականի հոկտեմբերի 27-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված ԷլԷՍի «Տամի Ի Կո» ընկերության (Repina str.34, Khimki, 141402 Moscow region, Russian Federation, RU) «HENDERSON» (No20230170) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված՝ 25-րդ դասի ապրանքների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը շփոթելու աստիճան նման է 25-րդ դասի ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «HENDERSON» (HENDERSON S.R.L. Via Venezia 56 I-35010 Vigonza (PD) (IT), N 852100, 29.03.2005թ.) բառային ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 119-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները: Ի լրումն ցանկանում ենք հավելել, որ Կարգի 137-րդ, 138-րդ կետերի համաձայն նույնատիպ ապրանքներ համարվում են նույն սեռին, տեսակին վերաբերող այն ապրանքները, որոնք նման ապրանքային նշանով նշելու դեպքում սպառողի կողմից ընկալվում են որպես նույն ընկերության արտադրանք: Ապրանքների նույնատիպ լինելը որոշելիս հաշվի են առնվում ապրանքի տեսակը, ապրանքի օգտագործման բնագավառը, ապրանքի իրացման պայմանները (իրացման ոլորտը և կարգը):

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հայտում նշված 25-րդ դասի ապրանքների համար որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը շփոթելու աստիճան նման է 25-րդ դասի ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «HENDERSON» (HENDERSON S.R.L. Via Venezia 56 I-35010 Vigonza (PD) (IT), N 852100, 29.03.2005թ.) բառային ապրանքային նշանին:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր, որ ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված էլէՍԻ «Տամի ի Կո» ընկերության «HENDERSON» (No20230170) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ